



---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ԵՎ ՈՒՂԵՆԻՃԵՐ  
(ԱՄՓՈՓԱԳԻՐ)

Հեղինակներ՝ Տիգրան Գևորգյան, Արամ Հարությունյան, Արմեն Դանիելյան, Ռեծիս Դանիելյան,  
Գառնիկ Բայան, Սուրեն Շատվորյան (թիմի ղեկավար)

Սույն հրապարակման մեջ արտահայտած տեսակետները, մտքերն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակներին և չեն արտացոլում Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի քաղաքականությունն ու դիրքորոշումը:

## **Բովանդակություն**

1. ՏԵՍԼԱԿԱՆ
2. ՎԵՐԱԿԱՆԳՎՈՂ ԷԼԵՐԳԻԱՅԻ ՆԵՐՈՒԺԸ
3. ԸԱԷՄ ԿԱՌՈՒԿԱՑՔԸ ԵՎ ԷԼԵՐԳԵՏԻԿ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ
4. ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՔԱՐՏԵՁ
5. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# 1. Տեսլական

Էներգետիկ անկախությունը պետական ինքնիշխանության կարևոր բաղադրիչն է և, հետևաբար, սոցիալ-տնտեսական առաջընթացի անհրաժեշտ պայմաններից մեկը: Արեգակնային և հողմային էներգիայի հարուստ ռեսուրսները թույլ են տալիս զարգացնել Էլեկտրաէներգիայի մեծածավալ արտադրություն և դրանով՝ նպաստել Էներգետիկ անկախությանը: Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի ոլորտի զարգացման խնդիրները, այդ թվում՝ Էներգետիկ անկախության հիմնախնդիրները, մշտապես եղել են մանրամասն ուսումնասիրության առարկա: Այս ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անկախության զարգացման ուղիների բացահայտմանը:

Հայտնի է, որ վերականգնվող էներգիայի աղբյուրների մեծ մասնաբաժինը Էներգահամակարգում առաջացնում է կայունության, անվտանգության և հուսալիության հետ կապված խնդիրներ, որոնց հասցեագրումը պարտադրում է գործի դնել լրացուցիչ միջոցներ: Ընդ որում, այս խնդիրների լուծումը Հայկական Էներգահամակարգում կարող է երաշխավորվել բազիսային հզորությունների՝ ջերմային և ատոմային Էլեկտրակայանների, ինչպես նաև վերջիններիս աջակցող էներգիայի պահեստավորման տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ հիդրոկուտակիչ Էլեկտրակայանները և քիմիական կուտակիչները: Բացի այդ, որոշիչ նշանակություն կունենա միջհամակարգային կապերի ուժեղացումը, ժամանակակից ցանցային տեխնոլոգիաների կիրառումը, միկրո ցանցերի լայնածավալ զարգացումը, շուկայի կառավարման նորագույն գործիքների ու քաղաքականության ներմուծումը, որոնք, ի թիվս այլ բազմաթիվ պահանջների, անհրաժեշտ նախապայման են հանդիսանում Էներգահամակարգում վերականգնվող էներգիայի հարուստ պաշարները առավելագույնս արդյունավետ գործի դնելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչև 2040 թվականը Էլեկտրաէներգետիկական ներքին պահանջարկի համար գազի զրոյականացման սցենարը իրականացվում է համակարգում ատոմակայանի առկայությամբ, որի շնորհիվ պետք է ապահովվի համակարգի կայունությունը: Մինևույն ժամանակ բնական գազին վերապահվում է զուտ պահուստային նշանակություն՝ արտակարգ իրավիճակների, ատոմակայանի վերալիցքավորման, և այլ դեպքերի համար:

Տրանսպորտի ոլորտում բնական գազը կպահպանի իր նշանակությունը, թեև հանրային և մասնավոր տրանսպորտի Էլեկտրիֆիկացման արդյունքում հեղուկ վառելիքի և գազի պահանջարկը աստիճանաբար կնվազի: Ջեռուցման նպատակով բնական գազը կպահպանի իր նշանակությունը, սակայն ոլորտում այլընտրանքների՝ Էլեկտրաէներգիայի, ջերմային պոմպերի, արևային տաքացուցիչների, կենսագազի և այլն կիրառման աճը զգալիորեն կնվազեցնի բնական գազի մասնաբաժինը: Էլեկտրաէներգիայի աճող պահանջարկը ջեռուցման և տրանսպորտի ոլորտում կբավարարվի ածխածնային գազի ցածր մակարդակ պարունակող էներգիայի աղբյուրների հաշվին, ինչպիսիք են միջուկային, հիդրո, քամու, արևի, կենսագազի և այլն:

Էներգիայի ապակենտրոնացված արտադրությունը՝ ինքնավար միևնույն և միկրո ցանցերի և այլ բաշխված էներգաարտադրության համակարգերի ինտեգրումը վերջնական սապառողների հետ (օրինակ՝ Էլեկտրական մեքենաների լիցքավորիչները), կնպաստի Էլեկտրական ցանցերի բեռնաթափմանը, հետևաբար՝ ցանցում ռեժիմների կայունությանը և անվտանգության ապահովմանը:

Ընդհանուր առմամբ, մենք պատկերացնում ենք մի ամբողջական համակարգ, որտեղ բոլոր տեսակի օգուտները և ծախսերը, օրինակ՝ բնապահպանական և էներգահամակարգի կառավարման ծախսերը, կլինեն հաշվառված և արդարացիորեն բախշված բոլոր մասնակիցների միջև: Այսպիսի մոտեցմամբ ինստիտուցիոնալ լուծումները առաջնային և կարևորագույն նշանակություն կունենան գեներացնող հզորությունների ընդլայնման և բազմազանեցման համար:

Օրենսդրական առաջնահերթ լուծումներ է պահանջում նաև շահագործումից դուրս բերվող սարքավորումների՝ արևային վահանակների, էլեկտրական մեքենաների մարտկոցների և լիցքավորող կայանների և այլն վերամշակման և վնասագերծման գործընթացը:

Չայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի՝ մինչև 2040/2050թթ. զարգացման մոդելավորումը իրականացվել է՝ հաշվի առնելով վերը նշված բոլոր նկատառումները:

## 2. ՎԵՐԱԿԱՆԳՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՆԵՐՈՒԺԸ

### Արևային Էներգիայի պաշարներ

Հայաստանում առկա է արևային Էներգիայի զգալի ներուժ: Արեգակնային Էներգիայի միջին տարեկան հոսքը հորիզոնական մակերեսի մեկ քառակուսի մետրի վրա կազմում է մոտ 1700 կՎտժ (Եվրոպայում՝ միջինը 1000 կՎտժ): Հայաստանի տարածքի մեկ քառորդը օժտված է 1850 կՎտժ/մ<sup>2</sup> արևային Էներգիայի պաշարներով: Հայաստանի Հանրապետության տարածքում արևային ճառագայթման միջին տարեկան ընդհանուր ցուցանիշը (տարվա ընթացքում հորիզոնական միավոր մակերեսին ընկնող ճառագայթումը) տատանվում է 140-ից 155 կկալ/սմ<sup>2</sup> տիրույթում:

Գնահատվել է արևային ջրատաքացուցիչ (ԱՁՏ) և ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի ազգային Էներգետիկ անկախության բարելավման տեխնիկական ներուժը՝ վերջնական սպառման և առաջնային Էներգիայի կրճատման տեսանկյունից:

Արևային ջերմային տեխնոլոգիաները զգալի ներուժ ունեն Հայաստանում ԷլեկտրաԷներգիան և բնական գազը փոխարինելու համար:

Այս ծախսարդյունավետ տեխնոլոգիան մինչև 2041 թվականը 400 000 տանիքում ԱՁՏ-ների<sup>1</sup> արագացված տեղակայման արդյունքում ունակ է տարեկան փոխարինել մոտ 153,7 միլիոն խորանարդ մետր բնական գազ և խնայել 360 519.6 ՄՎտժ ԷլեկտրաԷներգիա, որը սպառվում է ջրատաքացման կարիքներով : Մինչև 2050 թվական այդ ծավալները կկազմեն 230.6 միլիոն մ<sup>3</sup> բնական գազ և 540 779.5 ՄՎտժ ԷլեկտրաԷներգիա:

Արևային ջերմային Էներգիայի օգտագործման փորձը ցույց է տալիս, որ չափազանց կարևոր է արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմների և աջակցող քաղաքականության իրականացումը: Պետությունը կարող է ապահովել այս ծախսարդյունավետ ջրատաքացուցիչ համակարգերի օրենսդրական միջոցներով.

- զարգացնելով արևային ջերմային համակարգերի տեղական արդյունաբերությունը,
- սահմանելով բնակելի ոլորտում արևային համակարգերի կիրառմամբ պարտադրված Էներգախնայողության նորմեր,
- սահմանելով ջրատաքացման համար արևային Էներգիայի պարտադիր օգտագործմանն ուղղված նոր կանոնակարգեր սպառողների համար:

Արևային ՖՎ տեխնոլոգիաների նույն արագությամբ տարածման սուսկ բնակելի առանձնատների<sup>2</sup> տարեկան արտադրությունը կկազմի 2.16 ԳՎտժ, ինչը համարժեք է 204.6 մլն մ<sup>3</sup> բնական գազի (10.55 կՎտժ/մ<sup>3</sup> փոխակերպմամբ): Եթե տեղադրման տեմպերը պահպանվեն հետագայում, ապա 25-րդ տարվա վերջում ՖՎ համակարգերի քանակը կհասնի 560.000-ի, ընդհանուր տեղադրված հզորությունը՝ 2075.8 ՄՎտ և տարեկան արտադրանքը՝ 3.02 ԳՎտժ ԷլեկտրաԷներգիա, ինչը համարժեք է 296.7 միլիոն մ<sup>3</sup> բնական գազի:

<sup>1</sup> Ընդունվել է պայմանական ԱՁՏ համակարգ 300 լիտր տարողությամբ և 80 % արդյունավետությամբ, որի մեկ տարվա կտրվածքով միջին օրական արտադրությունը կազմում է 15.4 կՎտժ ջերմային Էներգիա:

<sup>2</sup> 400.000 տանիքների տեղադրման դեպքում միջինում 3.56 կՎտ հզորությամբ ՖՎ համակարգերի

Մինչև 2040 թվականն այս նպատակը իրատեսական է, սակայն անհրաժեշտ է գործի դնել նպատակաուղղված պետական քաղաքականություն, որում կներառվեն խրախուսման, սպառողների շահերից բխող ծրագրեր, պատշաճ տեխնիկական կարգավորումներ, շուկայական մեխանիզմների խթանման և սոցիալական աջակցության հետ առնչվող հարցեր:

Բացի այդ, արևային ՖՎ-ին համակարգերը կարող են իդեալական լուծումներ առաջարկել միկրոցանցերի և, մասնավորապես, գյուղատնտեսական միկրոցանցերի զարգացման համար՝ հնարավորություն տալով իրականացնել բաշխված էլեկտրաէներգիայի արտադրություն, սպառում և պահեստավորում, որի արդյունքում բացառվում է ցանցի ռեժիմների վրա փոփոխական աղբյուրների առկայության հետ կապված ազդեցությունները:

### Յոթմային էներգիայի պաշարները

Քամու գլոբալ առկայությունը (ՔԳԱ), որը մշակվել է 2015 թվականին Դանիայի Տեխնիկական համալսարանի կողմից, թույլ է տալիս գնահատել Յայաստանի հողմային էներգիայի ներուժը: Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Յայաստանի հողմային պաշարները թերագնահատված են: Այս փաստը սկզբունքորեն փոխում է Յայաստանում հողմային էներգիայի հեռանկարային զարգացման ընդհանուր տեսլականը:

ՔԳԱ-ի՝ այս անվճար առցանց գործիքի միջոցով կարելի է իրականացնել մի շարք ճշգրիտ ուսումնասիրություններ և ձևավորել հողմային էներգիայի արտադրության ճշգրիտ կանխատեսումներ՝ ընդհանուր ներուժի և կոնկրետ հողմակայանների համար՝ նախքան տեղում չափումներ կատարելը:

Յայաստանի տարածքում լավագույն ներուժ ունեցող յուրաքանչյուր հողմակի կամ հողմակայանի Արդյունավետության Հիմական Գործակիցը (ԱՅԳ) գերազանցում է 66 %-ը, ինչը նշանակում է մոտ 6000 ժամ/տարի: Արտադրության ընդհանուր տևողությունը կազմում է ավելի, քան 33% (մոտ 3000 ժամ/տարի):

Ներկայումս, հողմային էներգետիկայի մասնաբաժինը կազմում է էլեկտրաէներգիայի արտադրության ոչ ավել, քան 0.5%-ը: Մեր կարծիքով, ներդրումների աջակցման մեխանիզմների կիրառման դեպքում այն ողջամտորեն կարող է բավարարել Յայաստանի էլեկտրաէներգիայի ներքին պահանջարկի 10%-ը:

### Կենսազագ

Կենսազագը, չնայած զգալի էներգետիկ ներուժի, մեծ հաշվով մնում է անտեսված որպես էներգետիկ պաշար, չնայած, որ յուրացման դեպքում այն կարող է զգալի ներդրում ունենալ երկրի էներգետիկ անկախության բարձրացման գործում: Անտեսված լինելու պատճառներից է՝ նախնական կապիտալ ծախսը: Սուբսիդավորման բարենպաստ քաղաքականության դեպքում, օրինակ՝ ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրմամբ կամ ֆինանսական այլ նորարարական մեխանիզմների կիրառությամբ հնարավոր է հիմնովին փոխել իրավիճակը:

Կենսագազը կարող է օգտագործվել նույն նպատակներով, ինչ բնական գազը, ներառյալ՝ ջեռուցումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը և վերամշակումից հետո որպես ավտոմեքենայի վառելիք: Կենսագազը ստացվում է տարբեր կենսաթափոններից՝ գյուղատնտեսական (գոմաղբ, բույսերի մնացորդներ), արդյունաբերական (կոյուղաջրի տիղմ, սննդի արտադրության թափոններ, սպանդանոցներից գոյացող թափոններ) և կենցաղային թափոններից:

Չայաստանում գործում են անասնապահական շուրջ 170 հազար անհատական և կոլեկտիվ տնտեսություններ: Եթե կենսագազի արտադրությանը ներգաված \$երմերային տնտեսությունների քանակը տասը տարվա ընթացքում հասնի 2880-ի շուրջ 155000 հԵԱ գլխաքանակով, ապա կենսագազի արտադրության ծավալը համեմատելի կլինի մոտ 70 միլիոն խորանարդ մետր ներկրվող բնական գազի հետ: Բարձր տնտեսական արդյունավետության մասին վկայում է ներդրումների վերադարձի ժամկետը՝ 3-ից 4 տարի:

Կենսագազի արդյունաբերական արտադրության մեկ այլ հիմնական աղբյուր են հանդիսանում կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) հեռացման վայրերը: Չայաստանում ԿԿԹ-ից էներգիայի արտադրության միջին տարեկան ծավալն այսօր գնահատվում է 1600 մետրիկ տոննա/օր:

Չայաստանում կենսագազի արդյութրությունը հաջողությամբ զարգացնելու համար աջակցող ինստիտուցիոնալ քաղաքականության հետ մեկտեղ անհրաժեշտ է իրականացնել աշխատուժի պատրաստման ծրագրեր: Քաղաքականությունը պետք է ներառի, բայց չսահմանափակվի հետևյալ խնդիրներով.

- կենսագազի տեխնոլոգիաների քարոզչություն,
- որոշակի մեծություն ունեցող անասնապահական տնտեսությունների համար գոմաղբի պարտադիր \$երմենտացիայի սահմանում,
- գոմաղբից էներգիայի արտադրությունը խթանող նպատակաուղղված քաղաքականության իրականացում՝ փոքրածավալ \$երմենտացիայի \$ինանսավորման համար հատուկ սխեմաների կիրառում, որոնք կապահովեն \$երմերների էներգետիկ անկախության և անվտանգության ավելի բարձր աստիճան, սննդի պատրաստման և ջեռուցման համար պինդ վառելիքի օգտագործման նվազեցում, անտառահատումների կրճատում,
- փոքրածավալ \$երմենտացիայի գործարկման, պահպանման և անվտանգության ուսուցման հնարավորություն:

### Կենսազանգված

Չայաստանում 1990 թվականների կեսերին իրականացված հետազոտությունների արդյունքում, հաշվի առնելով էներգետիկ մշակաբույսերի, ինչպիսիք են արագ աճող ծառերի աճեցման հնարավորությունը և գյուղատնտեսական գործունեության մնացորդների հարակից հասանելիությունը, ընտրվել են երեք հարթակներ: Չայաստանի հարավ-արևմուտքում՝ Արարատյան դաշտավայրում, կարող է արտադրվել բավականաչափ կենսազանգված 25-35 ՄՎտ հզորությամբ կաթսաներում այրելու համար: Կենսազանգվածի մոտ 63%-ը կարելի է ստանալ հատուկ մշակաբույսերից չօգտագործվող կամ որակազրկված գյուղատնտեսական հողերից, և լրացուցիչ՝ գյուղատնտեսական գործունեության մնացորդներից: Երկրորդ հարթակում, որը գտնվում է Չայաստանի



կենտրոնական շրջանում՝ Սևանա լճի ավազանում, կարող է արտադրել բավականաչափ կենսազանգված 35 ՄՎտ հզորությամբ տեղակայանքի համար Յրագրան քաղաքում, ընդ որում կենսազանգվածի 58 %-ը կստացվի այդ նպատակով աճեցված ծառատեսակներից, իսկ մնացած մասը՝ առկա տնկարկներից: Երրորդ հարթակը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելքում, որը բնութագրվում է բնութան ավելի ցուրտ պայմաններով: Անտառային մնացորդները և Էներգետիկ մշակաբույսերը կկարողանան ծածկել կենսազանգվածի պահանջարկի ընդամենը 10%-ը: Այս տեղանքից ստացված կենսազանգվածը բավարար կլինի ապահովելու Վանաձորում 20 ՄՎտ հզորությամբ համակարգի մատակարարումը:

Կարճաժամկետ ապագայում նպատակահարմար է զարգացնել ռոտացիայի կարճ շրջան ունեցող Էներգետիկ մշակաբույսերի լայնածավալ տնկարկներ՝ հիմնականում վառելիքայտի և երկրորդ հերթին՝ Էլեկտրաէներգիայի արտադրության պահանջարկը ապահովելու համար: Ջերմոցային գազերի արտանետումների և ածխածնային վառելիքների օգտագործման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումները նույնպես կարող են հանդիսանալ այս ծրագրի անբաժանելի մաս և պետք է հաշվի առնվեն առաջարկվող ներդրումային սխեմայի տնտեսական հիմնավորման ժամանակ:

### Կենսաէթանոլ

Արդյունաբերական ծավալով կենսաէթանոլի օգտագործման տեխնիկատնտեսական նախնական ուսումնասիրության հիմնական դրույթներն են.

- Հետազոտական մանդատով սահմանվել է խառնուրդի 10 տոկոսանոց չափաբաժին որպես խթան Հայաստանում կենսաէթանոլի նոր արդյունաբերության զարգացման համար

- Կենսաէթանոլի արտադրության առավել հարմար հումքի տեսակներն են՝ գետնախնձորը, անասնակեր եգիպտացորենը, քաղցր սորգոն և եղերգը:

- Կենսաէթանոլի նոր արդյունաբերության զարգացման համար նախընտրելի է տարբեր վայրերում մեկնարկել մի քանի (2-3) փոքր վերամշակող օբյեկտներ:

- Կենսաէթանոլը որպես վերականգնվող Էներգիայի պաշար դասակարգելու և ճանաչելու համար անհրաժեշտ է լայնորեն վերանայել ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորող դաշտը:

Չնայած մեկ լիտր կենսաէթանոլը պարունակում է մոտավորապես 30% ավելի քիչ Էներգիա, քան բենզինը, բիոէթանոլն ունի ավելի բարձր օկտանային թիվ, ինչը այն դարձնում է արժեքավոր բաղադրիչ ավելի թանկ միջին և պրեմիում բենզինի հետ խառնուրդներում: Տեղական արտադրության կենսաէթանոլը չի ենթարկվի ներմուծման հարկի:

Հայաստանի կախվածությունը ներմուծվող բենզինից և դրանով պայմանավորված բենզինի բարձր գինը նպաստում է կենսաէթանոլի տեղական արտադրության հնարավորությունների իրացմանը:

### Հիդրոէներգետիկա

Հիդրոէներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունն ու ռազմավարական նպատակները սամանված են այս ոլորտի համար ընդունված նորմատիվ դաշտով և ռազմավարական զարգացման ծրագրերով: Նոր ՀԷԿ-երի զարգացման հնարավորությունները հիմնականում արտացոլված են 2016 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված ՀՀ հիդրոէներգետիկայի զարգացման դրույթներում: Գործող ՓՀԷԿ-երի արտադրողականության բարձրացման մարտահրավերը կապված է միջազգային տեխնիկական և բնապահպանական ստանդարտներին համապատասխանեցման հետ:

Նախատեսվում է ՓՀԷԿ-երի քանակի հետագա աճ: Սակայն այս աճի արագությունը աստիճանաբար կնվազի տնտեսապես մատչելի հիդրոէներգետիկ պաշարների սպառման և բնապահպանական պահանջների խստացման պատճառով:

Էներգետիկայի ոլորտի զարգացման ծրագրի համաձայն՝ նախատեսվում է հիդրոկուտակիչ էլեկտրոտակայանի (ՀԿԷԿ) գործարկումը: ՀԿԷԿ-երը, որպես կանոն, չեն դիտարկվում որպես վերականգնվող էներգիայի աղբյուր, սակայն հանդիսանում են արդյունավետ գործիք բեռնվածքի կորի հարթեցման համար:

### 3. ԸԱԷՄ ԿԱՌՈՒՑՎԱՑՔԸ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԸՍՏ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անկախության մակարդակը գնահատվել է 2030, 2040 և 2050 թվականների համար իրականացված կանխատեսումների հիման վրա:

Ուսումնասիրությունը հիմնվել է տարբեր հուսալի աղբյուրների տվյալների և կանխատեսումների վրա, այդ թվում՝ երկրի ակնկալվող տնտեսական զարգացումը, Նոր արտադրական հզորությունների գործարկումը, սպառման տարբեր ոլորտներում (ներառյալ՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, սպասարկումը, բնակելի հատվածը, տրանսպորտը, ոչ Էներգետիկ նպատակով սպառումը) պահանջարկի փոփոխության միտումները, Էներգետիկ ոլորտի զարգացման ծրագրերը և այլն: Հիմնվելով մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքների վրա՝ ձևավորվել են Հայաստանի Հանրապետության վառելիքի և Էներգիայի զարգացման հաշվեկշիռների երեք տարբեր սցենարներ: Այս երեք սցենարները՝ Բազայինը, Արագացվածը և Ազդեսիվը, միմյանցից տարբերվում են ցուցանիշներով, որոնց մանրամասն նկարագիրը բերված է ճանապարհային քարտեզի ամբողջական տարբերակում:

Էներգետիկ հաշվեկշիռի հիմնական ցուցանիշներից մեկը առաջնային Էներգիայի աղբյուրների մատակարարումն է (ԱԷՄ): Հաշվարկները իրանացվել են Էներգիայի պաշարների անվանական մեծությունների նորմալացված միավորների փոխակերպման եղանակով: Միջազգային Էներգետիկ գործակալության (ՄԷԳ) ստանդարտների համաձայն, որպես պայմանական միավոր օգտագործվում է տոննա նավթային համաժեքը (տնհ), հաշվարկված կոնկրետ Էներգետիկ պաշարի ջերմարտադրության գործակցի հիման վրա:

Բազային սցենարը ընդգրկում է հաղորդման ցանցի զարգացման բոլոր կողմերը՝ Էլեկտրաէներգետիկական համակարգի 2040թ. անվտանգությունը, պաշտպանվածությունը և հուսալիությունը: Այն մշակվել է Էլեկտրաէներգետիկական համակարգի աշխատանքային ռեժիմների ճշգրիտ մոդելավորման և պլանավորման հիման վրա՝ հաշվի առնելով տարբեր գործոններ, ինչպիսիք են Էներգետիկ համակարգի շահագործման հուսալիության և անվտանգության չափորոշիչները, վառելիքի և Էներգիայի հաշվեկշիռների մշակման սկզբունքները, Էներգետիկ պաշարների բազմազանեցումը և Էներգետիկ ոլորտի անվտանգությանը և անկախությանը ներկայացվող պահանջները: Թեև որպես հիմնական թիրախ սահմանվել է 2040 թվականը, ուսումնասիրությունը դիտարկել է մինչև 2050 թ. զարգացման հեռանկարները՝ հաշվի առնելով ընդհանուր Էլեկտրական ցանցերում հողմային և արևային Էլեկտրակայանների ինտեգրման և ընդլայնման հնարավորությունները:

Արագացված սցենարով ենթադրվում է, որ բազային սցենարի 2050թ. նպատակները կիրականցվեն 2040թ., որի իրագործումը մեծապես կախված է կիրառվելիք տեխնոլոգիաների տնտեսական մատչելիությունից և զարգացման աստիճանից: Տեխնոլոգիական և տնտեսական զարգացման ներկայիս միտումները ցույց են տալիս, որ Արագացված սցենարի իրագործելիությունը համեմատաբար մեծ հավանականություն ունի: Արագացված սցենարի համար նույնպես իրականացվել է հաղորդման համակարգի պլանավորում՝ հաշվի առնելով բոլոր հիմնական ասպեկտները՝ Էլեկտրաէներգետիկ համակարգի աշխատանքային ռեժիմների ճշգրիտ մոդելավորման և պլանավորման միջոցով, այն նույն սկզբունքներով, ինչ բազային սցենարի համար: Հիմնական

տարբերությունն այն է, որ Արագացված սցենարով առաջարկված պլանի փոփոխման հավանականությունը ավելի մեծ է, քան Բազային սցենարում: Այս դեպքում կպահանջվի հաղորդման համակարգի պլանի վերանայում:

Ազրեսիվ սցենարը ենթադրում է Արագացված սցենարի համեմատ քամու և արևային էներգիայի էապես ավելի բարձր ինտեգրում:

- արևային \$Կ տեղակայանքներում մոտ 2.5 անգամ ավելի շատ արտադրություն,
- ջրատաքացուցիչ արևային տեղակայանքներում՝ մոտ 1.5 անգամ ավելի շատ,
- հողմային էլեկտրակայաններում՝ մոտ 1.4 անգամ ավելի շատ:

Այս սցենարի հիմնավորումը պահանջում է իրականացնել ավելի խորը հետազոտություն, որը, ի թիվս այլոց, պետք է հաշվի առնի բաշխիչ և հաղորդման ցանցերի էական հզորացման անհրաժեշտությունը, պահեստավորման տեխնոլոգիաների ստեղծումը, ինչպիսիք են հաղորդման համակարգերում հիդրոկուտակիչ կայանները, կամ ներցանցային և արտացանցային ինքնավար արևային ֆոտովոլտային տեղակայանքների ցածր լարման ցանցերում լիթիում-իոնային մարտկոցների օգտագործումը, կամ դրանց համատեղ տարբերակների իրականացումը:

Ազրեսիվ սցենարով բաշխման և հաղորդման ցանցերի խորացված պլանավորում չի իրականացվել, ինչպես դա արվել է Բազային և Արագացված սցենարների համար: Դա պայմանավորված է Ազրեսիվ սցենարի գնահատման համար անհրաժեշտ վերևում արդեն նշված գործոնների առաջացման ժամկետների և պայմանների անորոշությամբ: Հաղորդման համակարգի պլանավորման հետ կապված մոդելավորման, հաշվարկների և արդյունքների մանրամասները նկարագրված են ճանապարհային քարտեզի հիմնական մասում:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են անվանական միավորներով արտահայտված հիմնական վառելիքաէներգետիկ պաշարների 2040 թ. կանխատեսվող հաշվեկշիռները:

## 2040 թ. էլեկտրաէներգիայի հաշվեկշիռ, մլն կՎտժ

N	Բազային	Արագացված	Ազրեսիվ
1. Ներմուծում	0.0	0.0	0.0
2. Արտահանում	-6556.4	0.0	0.0
3. Պահուստների փոփոխություն	0.0	-992.7	0.0
4. Ատոմային էլեկտրակայաններ (ՋԷԱ*)	6320.0	6320.0	6320.0
5. Ջերմային էլեկտրակայաններ (ՋԷԱ)	4733.0	0.0	0.0
6. Ջերմային և էլեկտրական էներգիաների համակցված արտադրություն (ՋՁԱ)	13.3	13.3	13.3
7. Փոխակերպման այլ եղանակներ	0.0	0.0	0.0
8. Հիդրոէլեկտրակայաններ (ՋԷԱ)	1396.0	1396.0	1396.0
9. Փոքր հիդրոէլեկտրակայաններ (ՋԷԱ)	820.0	820.0	820.0
10. Հողմային էլեկտրակայաններ (ՋԷԱ)	1340.0	1340.0	1900.0
11. Արևային էլեկտրակայաններ (ՋԷԱ)	1901.0	2605.0	6544.8
12. Ոլորտի սեփական կարիքներ	-863.3	-705.2	-930.2
13. Հաղորդման և բաշխման կորուստներ	-580.0	-580.0	-580.0
14. Արդյունաբերություն	-3361.8	-3361.8	-3361.8

N	Բազային	Արագացված	Ազդեսիվ
15. Տրանսպորտ	-104.6	-757.1	-1895.5
16. Տնային տնտեսություններ	-2775.7	-3617.4	-7301.5
17. Գյուղատնտեսություն	-102.0	-107.2	-185.8
18. Սպասարկում	-2179.5	-2373.0	-2739.3
<b>Ընդամենը արտադրություն</b>	<b>16523.3</b>	<b>12494.3</b>	<b>16994.1</b>
<b>Ընդամենը սպառում</b>	<b>-16523.3</b>	<b>-12494.3</b>	<b>-16994.1</b>

\* ՉԷԷԱ՝ հիմնականում էլեկտրաէներգիայի արտադրություն

### 2040 թ. բնական գազի հաշվեկշիռ, մլն մ<sup>3</sup>

N	Բազային	Արագացված	Ազդեսիվ
1. Ներմուծում	3128.6	1610.3	1084.6
2. Արտահանում	0	0.0	0.0
3. Պահուստների փոփոխություն	0	0.0	0.0
4. Ատոմային էլեկտրակայաններ (ՉԷԷԱ)	0.0	0.0	0.0
5. Ջերմային էլեկտրակայաններ (ՉԷԷԱ)	-972.0	0.0	0.0
6. Ջերմային և էլեկտրական էներգիաների համակցված արտադրություն (ՉՋԱ)	-3.8	-3.8	-3.8
7. Հիդրոէլեկտրակայաններ (ՉԷԷԱ)	0	0.0	0.0
8. Փոքր հիդրոէլեկտրակայաններ (ՉԷԷԱ)	0	0.0	0.0
9. Հողմային էլեկտրակայաններ (ՉԷԷԱ)	0	0.0	0.0
10. Արևային էլեկտրակայաններ (ՉԷԷԱ)	0	0.0	0.0
11. Փոխակերպման այլ եղանակներ	0	0.0	0.0
12. Ոլորտի սեփական կարիքներ	-5.9	-5.9	-6.4
13. Հաղորդման և բաշխման կորուստներ	-83.3	-83.3	-124.0
14. Արդյունաբերություն	-399.6	-399.6	-399.6
15. Տրանսպորտ	-633.5	-443.5	-172.6
16. Տնային տնտեսություններ	-668.9	-465.0	-143.0
17. Գյուղատնտեսություն	-131.0	-131.0	-166.0
18. Սպասարկում	-230.7	-78.2	-69.2
<b>Ընդամենը արտադրություն</b>	<b>3128.6</b>	<b>1610.3</b>	<b>1084.6</b>
<b>Ընդամենը սպառում</b>	<b>-3128.6</b>	<b>-1610.3</b>	<b>-1084.6</b>

### 2040 թ. շարժիչային բեռների հաշվեկշիռ, տ

N	Բազային	Արագացված	Ազդեսիվ
1. Ներմուծում	200900.9	160842.7	111879.3
2. Արտահանում			0.0
3. Պահուստների փոփոխություն			0.0
4. Ոլորտի սեփական կարիքներ			
5. Հաղորդման և բաշխման կորուստներ			
6. Ոչ էներգետիկ նպատակով սպառում	-20.1	-20.1	-20.1

7.	Արդյունաբերություն	-79.1	-79.1	-79.1
8.	Տրանսպորտ	-200288.7	-160230.4	-111267.0
9.	Տնային տնտեսություններ	-513.0	-513.0	-513.0
10.	Գյուղատնտեսություն			0.0
11.	Սպասարկում			0.0
	<b>Ընդամենը արտադրություն</b>	<b>200900.9</b>	<b>160842.7</b>	<b>111879.3</b>
	<b>Ընդամենը սպառում</b>	<b>-200900.9</b>	<b>-160842.7</b>	<b>-111879.3</b>

**2040 թ. դիզեյային վառելիքի հաշվեկշիռ, տ**

N	Բազային	Արագացված	Ազդեսիվ
1. Ներմուծում	177993.4	147395.0	113529.4
2. Արտահանում	0.0	0.0	0.0
3. Պահուստների փոփոխություն			0.0
4. Ոլորտի սեփական կարիքներ			
5. Հաղորդման և բաշխման կորուստներ			
6. Ոչ էներգետիկ նպատակով սպառում	-1735.4	-1735.4	-1735.4
7. Արդյունաբերություն	-15226.3	-15028.2	-15028.3
8. Տրանսպորտ	-143338.4	-114670.7	-86003.0
9. Տնային տնտեսություններ	-366.7	-366.7	-366.7
10. Գյուղատնտեսություն	-17326.6	-15593.9	-10396.0
11. Սպասարկում			0.0
<b>Ընդամենը արտադրություն</b>	<b>177993.4</b>	<b>147395.0</b>	<b>113529.4</b>
<b>Ընդամենը սպառում</b>	<b>-177993.4</b>	<b>-147395.0</b>	<b>-113529.4</b>

Յուրաքանչյուր սցենարում էներգետիկ անկախության մակարդակը գնահատելու համար որոշվել են ընդամենը առաջնային էներգիայի մատակարարման (ԸԱԷՄ) քանակները և հաշվարկվել են էներգետիկ անկախության գործակիցները (ԷԱԳ): Համեմատական վերլուծության նպատակով բերված են նաև 2020 թվականի՝ Պատմական ցուցանիշները՝ հաշվարկված ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված պաշտոնական տվյալների հիման վրա: Այս ցուցանիշները՝ արտահայտված պայմանական միավորներով, 2040թ. համար ներկայացված են ստորև աղյուսակում:


**ԸԱԷՄ կառուցվածքը պայմանական միավորներով և ԷԱԳ ըստ սցենարների, 2040**

Ընդամենը Առաջնային Էներգիայի Մատակարարում, (ԸԱԷՄ), կտ նհ	Էլեկտրաէներգիայի ուտոնեում/արտահանում	Բնական գազ	Այլ հանածո վառելիք (նավթ, ածուխ)	Միջուկային	Հիդրո	Արևային	Ջերմային	Կենսազգաց	Կենսազգաց	Կենսազգաց	ԸՆԴԱՄԵՆԸ	ԷԱԳ, %
Պատմական	-87.1	2141.2	568.1	718.2	152.9	11.7	14.3	0.2	75.9	3595.4	27.1	
Բազային	-563.7	2554.9	524.4	1646.7	190.5	163.5	23.9	115.2	75.9	4731.3	46.8	
Արագացված	-85.4	1276.3	450.6	1646.7	190.5	224.0	183.8	115.2	55.3	4132.9	60.3	
Ագրեսիվ	0	818.2	364	1646.7	190.5	562.8	275.7	163.4	78.6	4175.8	71.7	

Ստորև բերված պատկերում ներկայացած են 2040թ. ԸԱԷՄ կառուցվածքը տոկոսային արտահայտությամբ և Էներգետիկ անկախության գործակից (ԷԱԳ) արժեքները ըստ դիտարկված սցենարների:

**ԸԱԷՄ կառուցվածքը %-ով և ԷԱԳ ըստ սցենարների, 2040թ.**






Չարկ է նշել, որ վերը ներկայացված թվերն ամբողջությամբ չեն արտացոլում և, հավանաբար, թերագնահատում են ճանապարհային քարտեզում առաջարկվող քայլերի հնարավոր ազդեցությունը: Սույն ճանապարհային քարտեզում ներկայացված որոշ քայլերի, ինչպիսիք են հասարակական տրանսպորտում տեղի ունեցող փոփոխությունների նոր միտումները, երկրաջերմային էներգիայի զարգացումը, էներգաարդյունավետության միջոցառումները և այլն, քանակական ազդեցությունները որոշվել են որակական վերլուծությունների հիման վրա և պահանջում են առանձին ուսումնասիրություն, քանի որ դրանց ազդեցությունը կարող է լինել ավելի նշանակալից:

### 3. ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Ստորև բերված գծապատկերում ներկայացված են ճանապարհային քարտեզում առաջարկվող այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն մինչև 2040 թվականը՝ Էներգետիկ անկախության հնարավորինս բարձր մակարդակների հասնելու համար:

Առաջարկվող գործողությունները խմբավորված են երեք կատեգորիայի: Ուղղակի միջամտությունները ենթադրում են գործողություններ, որոնք պետք է ուղղակիորեն ձեռնարկվեն կենտրոնացված որոշումների կայացմամբ՝ ներկայանալով որպես շուկայից դուրս մեխանիզմներ: Կարգավորող բարեփոխումները ենթադրում են գործողություններ, որոնց նպատակն է այնպիսի շուկաների և ծառայությունների խթանում կամ ստեղծում, որոնք կարևոր նշանակություն կունենան Էներգետիկ անկախության հնարավորինս բարձր մակարդակի հասցնելու համար: Դա, իր հերթին, կհանգեցնի վերականգնվող Էներգիայի արտադրության, ցածր ածխածնային տեխնոլոգիաների և այլ փոփոխությունների զարգացման ավելի բարձր տեմպերի՝ հիմնված հիմնականում շուկայական մեխանիզմների վրա:



Վերջապես, հետազոտական գործողությունները պետք ուղված լինեն մի շարք ուսումնասիրությունների և իմիտացիոն մոդելավորման իրականացմանը, որոնք հիմք կհանդիսանան կարգավորող մեխանիզմների ստեղծմանը և ներդրումների ներգրավմանն ուղղված որոշումների կայացման համար:

Առաջարկվող գործողությունների իրականացումը հաջորդական է և ունի որոշակի նախադրյալներ՝ ներկայացված քայլերի տեսքով (տե՛ս գծապատկերը): Դրանք ուրվագծված են ստորև բերված յուրաքանչյուր փուլի ավելի մանրամասն նկարագրության մեջ:

Քայլերը, որպես այդպիսին, անկախ են սցենարներից, սակայն որոշ առաջարկվող գործողություններ պայմանավորված են տեխնոլոգիական զարգացումներով: Դրանք նշված են աստղանիշով և նկագրված են ենթակետերի վերջում:

Բացի խմբավորելուց, քայլերը գունավորվում են ըստ Ըներգետիկայի այն ոլորտի, որին դրանք հիմնականում ուղղված են: Այս գունավորվումը կատարվել է հետևյալ սկզբունքով.

- կապույտ գույնով նշված քայլերը վերաբերում են մատակարարման ոլորտին,
- կարմիր գույնով նշված քայլերը հիմնականում վերաբերվում են սպառման ոլորտին,
- դեղին գույնով նշված քայլերը վերաբերում են հաղորդման ցանցի ենթակառուցվածքին,
- կանաչ գույնով նշված քայլերը վերաբերում են էներգետիկ ենթակառուցվածքների շահագործման և կարգավորման հարցերին:

## **Ուղղակի միջամտություններ**

### 1.1 Նոր ատոմային կայանի կամ փոքր մոդուլային ռեակտորների կառուցում (2024 - 2036)

#### *Նախապայմաններ՝ չկան*

Այս քայլը ենթադրում է միջուկային էներգիայի համապատասխան տեխնոլոգիայի և մատակարարի ընտրություն, Մեծամորի ԱԷԿ-ին փոխարինող միջուկային նոր կայանի կառուցում և մինչև 2036թ. շահագործման հանձնում: Արդյունքում կապահովվի բազային էներգիայի հուսալի հասանելիություն ողջ ժամանակահատվածի համար:

### 1.2 Էներգաարդյունավետության և շենքերի վերանաորոգման գործունեություն (2024 – 2030)

#### *Նախապայմաններ՝ չկան*

Սա ենթադրում է Էներգաարդյունավետության ոլորտում (ինչպես առաջնային էներգիայի մատակարարման, այնպես էլ սպառման ոլորտում) ծրագրերի և գործողությունների իրականացում՝ համաձայն հաստատված նորմատիվ փաստաթղթերի, ինչպիսին, օրինակ, 2022-2030թթ. Էներգախնայողության և վերականգնող էներգիայի ազգային ծրագիրն է: Ակնկալվում է էներգիայի սպառման և էներգամատակարարման կորուստների նվազում:

### 1.3 Բնական գազի կայունության բարձրացում (2024 – 2030)

#### *Նախապայմաններ՝ չկան*

Այս քայլը ենթադրում է բնական գազի առկա մատակարարների պահպանում, ինչպես նաև գազի ազգային սպառումը ապահովելու նպատակով ռազմավարական պլանավորում և միջկառավարական համաձայնագրերի առկայություն: Այն ներառում է նաև Աբովյանի ստորգետնյա բնական գազի պահուստարանի ընդլայնում՝ բնական գազի ռազմավարական պահուստ ապահովելու նպատակով:

Արդյունքում կապահովվի բնական գազի մատակարարման հուսալիություն:

### 1.4 Հիդրոկուտակիչ կայանների միջոցով ռազմավարական պահուստի ավելացում (2031 – 2035)

*Նախապայմաններ՝ տես 3.1. Ցանցի ճկունության ապահովման մեխանիզմների հետազոտություն*

Էլեկտրական ցանցի օրեկան հաշվեկշռման նպատակով հիդրակուտակիչ Էլեկտրատեղակայանքի կառուցում (մինչև 450 ՄՎտ հզորությամբ)՝ որպես ոչ շուկայական մեխանիզմ:

Արդյունքում կապահովվի Էլեկտրաէներգետիկական համակարգի կայունությունը և վերականգնվող արտադրության ինտեգրման աստիճանի բարձրացումը:

1.5 Ջրածնով աշխատող Էլեկտրակայանի՝ որպես ռազմավարական պահուստի զարգացում\* (2037 – 2050)

*Նախապայմաններ՝ տես 2.4 Ջրածնային լուծումների կարգավորման զարգացում, 3.1 Ցանցի ճկունության ապահովման մեխանիզմների հետազոտություն, 3.5 Հայաստանում ջրածնի պահուստավորման տարբերակների ուսումնասիրում*

Իբրև ռազմավարական պահուստ ջրածնային հիմքով աշխատող Էլեկտրակայանի զարգացում (հնարավոր է գոյություն ունեցող համակցված ցիկլով աշխատող գազատուրբինային կայանի վերակառուցման միջոցով), որը կաշխատի որպես շուկայականից դուրս մեխանիզմ՝ Էլեկտրաէներգետիկական համակարգում դեֆիցիտի առաջացման դեպքում: Արդյունքում կապահովվի Էլեկտրաէներգետիկական համակարգի կայունության բարձրացում և տեղական աղբյուրների երկարաժամկետ պահեստի առկայություն:

\*Ջրածնային տեխնոլոգիաների զարգացվածության մակարդակը, պահեստարանների առկայությունը, և ջրածնի տեղական արտադրության հնարավորինս ցածր արժեք:

1.6 Ֆիզիկական հարատեվության բարձրացում (2025 – 2035)

*Նախապայմաններ՝ տես 3.2 Էներգետիկ անվտանգության ռազմավարության մշակում*

Լրացուցիչ միջոցառումների իրականացում՝ Էներգետիկ ենթակառուցվածքները ֆիզիկական վնասվածքներից պաշտպանելու համար:

1.7 Արդյունավետ հասարակական տրանսպորտի համակարգի զարգացում (2024 – 2040)

*Նախապայմաններ՝ տես 3.3 Հասարակական տրանսպորտի տարբերակների ուսումնասիրում*

Ազգային մակարդակում արդյունավետ հասարակական տրանսպորտի համակարգի ներդրում, որտեղ նախապատվությունը կտվի Էլեկտրաֆիկացմանը կամ այլ տեղական պաշարների (օրինակ՝ կենսաէթանոլի) օգտագործմանը: Այս քայլի արդյունքում կնվազի տրանսպորտային համակարգի կախվածությունը ներմուծվող հանածո վառելիքից:

1.8 Խելացի գանգերի կիրառման ընդլայնում (2025 – 2035)

*Նախապայմաններ՝ տես 3.2 Էներգետիկ անվտանգության ռազմավարության մշակում*

Ենթադրում է մի շարք խելացի լուծումների իրականացում՝ Էլեկտրական ցանցի վերահսկումը և կառավարումը բարելավելու նպատակով: Այս քայլի իրականացումը թույլ կտա, ի թիվս այլոց, բարձրացնել հոսքաբաշխման արդյունավետությունը, ցանցի կայունությունը, փոփոխական վերականգնվող արտադրության ինտեգրումը, կայունացված ռեժիմների կառավարումը: Քայլը ներառում է կիրբերանվտանգության

կենտրոնի ստեղծում՝ էլեկտրական ցանցերի և թվային շուկաների աշխատանքի ստուգման և մշտադիտարկման նպատակով:

1.9 Միջհամակարգային կապերի հզորացում (2024 – 2028)

*Նախապայմաններ՝ չկան*

Իրանի և Վրաստանի, ինչպես նաև հեռանկարում ԵՄ-ի հետ առևտուր իրականացնելու նպատակով էլեկտրաէներգիայի փողոսները ապահովող լրացուցիչ հզորությունների կառուցում: Այս քայլի իրականացումը թույլ կտա բարձրացնել էլեկտրաէներգետիկական համակարգի կայունությունը և փոփոխական վերականգնվող արտադրության ինտեգրման մակարդակը:

1.10 Միկրո ցանցերի զարգացում (2030 – 2040)

*Նախապայմաններ՝ տես 1.8 Խելացի ցանցերի կիրառման ընդլայնում, 2.10 ՓՎԷ արտադրողներին ցանցին ինտեգրելու նպատակով կարգավորումների փոփոխություն, 2.11 Միկրոցանցի կարգավորումներ*

Մեկուսացված էներգիայի համակարգերը չպետք է ամբողջությամբ հենվեն փոփոխական վերականգնվող էներգիայի աղբյուրների վրա, ինչպիսիք են արևային ՖՎ և քամու էներգիաները: Դրանց մասնաբաժինը պետք է պահպանվի արտադրության մինչև 15% մակարդակի վրա՝ համակարգի անվտանգության և կայունության ապահովման նպատակով: Հետևաբար, փոփոխական վերականգնվող էներգիայի պաշարների, ինչպիսիք են արևային ՖՎ և քամու էներգիաները, առավելագույն օգտագործման լուծումը դրանց ինքնավար միև- և միկրոցանցեր ներթափանցելն է: Միկրոցանցերի զարգացումը կթեթևացնի կենտրոնական ցանցի սթրեյնը և կապահովի էլեկտրաէներգետիկական համակարգի կայունությունը: Այս քայլի իրականացումը կնպաստի էներգահամակարգի կենսունակության մակարդակի բարձրացմանը և էներգիայի բաշխված ու տեղական արտադրության ընդլայնմանը, ինչպես նաև կենտրոնական ցանցից սպառողների կախվածության նվազեցմանը: Այս քայլը կիրականացվի վերը նշված նախապայմաններին զուգահեռ:

1.11 Վերականգնվող էներգիայի և էլեկտրիֆիկացման ընդլայնման համընթաց էլեկտրական ցանցերի զարգացում համաձայն կանխատեսումների (2024-2040)

*Նախապայմաններ՝ տես 3.6 Բաշխման ցանցի զարգացման ծրագիր, 3.7 Եղանակի և կլիմայի տվյալների հավաքագրում և վերլուծություն, գոյություն ունեցող կանխատեսման մեխանիզմների կատարելագործում*

Էլեկտրական ցանցի ուժեղացումը և ընդլայնումը թույլ է տալիս ապահովել փոփոխական էներգիայի արտադրության ավելի մեծ ինտեգրումը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի հավելյալ հոսքերի իրականացումը, ինչը կառաջանա էլեկտրաէներգիա սպառողների, օրինակ՝ տրանսպորտի և ջեռուցման էլեկտրիֆիկացման, աճի և ընդլայնման արդյունքում:

**Կարգավորող դաշտի բարեփոխումներ**

2.1 Անցում դեպի շուկայական հարաբերություններ Էներգետիկայի ոլորտում (2024 – 2026)

*Նախապայմաններ՝ չկան*

Հանաձայն USAID կողմից մշակված առաջարկությունների, նոր արտադրական հզորությունների մուտքը կիրականացվի մրցութայինից դեպի շուկայական հարաբերություններ աստիճանաբար անցման եղանակով: Այս քայլի արդյունքում կիրականացվի փոփոխական վերականգնվող արտադրության ավելի արդյունավետ ինտեգրումը:

2.2 Էլեկտրաէներգիայի ճկուն սակագներ (2030- 2033)

*Նախապայմաններ՝ տես 1.8 խելացի ցանցերի կիրառման ընդլայնում*

Կենցաղային և առևտրային սպառողների համար Էլեկտրաէներգիայի ճկուն գնագոյացման կիրառում, որը ավելի լավ կարտացոլի Էլեկտրաէներգիայի արտադրության փաստացի ծախսերը՝ պայմանավորված օրական և սեզոնային տատանումներով: Այս քայլի իրականացման արդյունքում կապահովվի Էլեկտրաէներգիայի սպառման արդյունավետության և հոսքաբաշխման կառավարման բարձրացում:

2.3 Խելացի լիցքավորում (2033 – 2035)

*Նախապայմաններ՝ տես 1.8 խելացի ցանցերի կիրառման ընդլայնում, 2.2 Էլեկտրաէներգիայի սպառման ճկուն սակագներ*

Խելացի լիցքավորումը ենթադրում է Էլեկտրական տրանսպորտի ոլորտի համար համապատասխան դաշտի ստեղծում և ծրագրերի իրականացում՝ Էլեկտրաէներգետիկական համակարգերի ռեժիմներում հնարավորինս մեծ քանակով Էլեկտրական մեքենաների ինտեգրումը հեշտացնելու նպատակով: Էլեկտրական մեքենաների քանակի ավելացման արդյունքում կապահովվի համակարգի կենսունակության բարձրացումը:

2.4 Ջրածնի կարգավորումների մշակում (2024 – 2026)

*Նախապայմաններ՝ չկան*

Ջրածնի օգտագործման և պահեստավորման խրախուսման նպատակով ազգային ստանդարտների և կարգավորումների մշակում:

2.5 Էլեկտրաէներգիայի շուկայի հավասարակշռման մեխանիզմներ (2026 – 2030)

*Նախապայմաններ՝ տես 3.1 Ցանցի ճկունություն ապահովման մեխանիզմների հետազոտություն*

Ենթադրում է օժանդակ և հավասարակշռման ծառայություններ մատուցող միջոցների շուկայի ստեղծում՝ Էլեկտրաէներգետիկական համակարգի ճկունության բարձրացման և պահուստների ստեղծման նպատակով: Արդյունքում կապահովվի հոսքաբաշխման կառավարելիության, համակարգի կայունության, փոփոխական վերականգնվող արտադրության ծավալների և պահուստների հասանելիության բարձրացում:

2.6 Պահանջարկի կառավարման ճկունության մեխանիզմներ (2033 – 2036)

*Նախապայմանները՝ տես 1.8 խելացի ցանցերի կիրառման ընդլայնում, 2.2 էլեկտրաէներգիայի սպառման ճկուն սակագներ, 2.5 էլեկտրաէներգիայի հավասարակշռման միջոցների շուկա*

Ենթադրում է պահանջարկի կառավարման միջոցների շուկայի զարգացում՝ օժանդակ և հավասարակշռման ծառայությունների մատուցում, սպառման կողմում ճկունության բարձրացում: Արդյունքում ակնկալվում է հոսքաբաշխման կառավարելիության, համակարգի կայունության, փոփոխական վերականգնող արտադրության ծավալների և պահուստների հասանելիության բարձրացում:

*2.7 Կարգավորումների համապատասխանեցում էլեկտրաէներգիայի առևտրի գործընկերությունների հետ (2024 – 2030)*

*Նախապայմաններ՝ չկան*

Ենթադրում է էլեկտրաէներգիայի առևտրում ընդգրկված գործընկերությունների հետ կարգավորումների համապատասխանեցում և համակարգերի սինքրոնացում (ներառյալ օր-ամառ շուկաները)՝ ֆինանսական և տեխնիկական կորուստների նվազեցման նպատակով: Քայլի իրականացման արդյունքում ակնկալվում է էլեկտրաէներգետիկական համակարգի կայունության, ինչպես նաև փոփոխական վերականգնող արտադրության ինտեգրման մակարդակի բարձրացում:

*2.8 Շահագրոծումից դուրս բերված սարքավորումներին առնչվող թափոնների կարգավորումներ (2024 – 2026)*

*Նախապայմաններ՝ չկան*

